

ԳԱՆՐԳ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀՈՒՅՆ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆՆ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԹԱՆՉԻՄԱԹԻ ԵՐԶԱՆՈՒՄ ԵՎ ԴՐԱՆԻՑ ՀԵՏԾՈՒՅՑ

Թանգիմաթ, Օսմանյան կայսրություն, Հունաստան, Կրետե, հույն բնակչություն,
կանոնադրություն, քրիստոնյա, պատրիարքարան

19-րդ դարի 20-ական թթ. հույն ժողովորդի ազգային-ազատագրական պայքարը և Բալկանյան թերակղզու հարավում անկախ Հունաստանի ստեղծումն էական ազրեցություն ունեցան Օսմանյան կայսրության վերնախավի վարած ազգային քաղաքականության վրա: Գիտակցություն ամրապնդվեց, որ եթե իրադարձությունները դասավորվեն նախկինի պես, ապա հնարավոր էին ազգային նոր շարժումներ, որոնք էլ, ամենայն հավանականությամբ, բերելու էին տարածքային նոր կորուստների: Ուստի սկսեցին նոր մոտեցումներ մշակել: Այդ ուղղությամբ առաջին քայլերը կատարվեցին 19-րդ դարի 20-30-ական թթ. Մահմուտ 2-րդ սուլթանի օրոք (1808-1839), ով հայտարարեց, թե կայսրության բոլոր հպատակներն իր հարազատ գավակներն են, որոնց ինքը վերաբերում է հավասարապես՝ նրանց միջև տարբերություն դնելով միայն կրոնական առումով¹: Ժամանակի նշանավոր պետական գործիք Մուստաֆա Ռեշիդ փաշան ևս գտնում էր, որ միայն բարեփոխումների միջոցով կարելի է պահպանել Օսմանյան կայսրությունը և անգամ հասնել նրա երբեմնի հզորությանը: Նա հասկանում էր նաև, որ բարեփոխումները պետք է շոշափեն նաև քրիստոնյա ազգերի շահերը: Մուստաֆա Ռեշիդի կազմած բարեմորոգումների ծրագիրը կայսերական որոշման տեսք ստացավ և որպես հրովարտակ հրապարակվեց 1839 թ. նոյեմբերի 3-ին Աբդուլ-Մեջիդ սուլթանի օրոք: Գյուլհանեի հաթթը շերիֆը, ինչպես կոչվեց այն, առաջ էր քաշում հետևյալ համալիր սկզբունքները.

ա. Օսմանահպատակ բոլոր քաղաքացիների (այդ թվում նաև քրիստոնյաների) կյանքի, գույքի և պատվի անձեռնմխելիություն,

բ. Առանց գործող դատավճիր պատիժ չկիրառել որևէ մեկի նկատմամբ,

գ. Հարկային համակարգի բարեփոխումներ՝ նոր օրենքների ընդունման տեսքով, որոնց նպատակը ոլորտում արդարության հաստատումն էր,

դ. Նոր օրենսդրություն բանակի և նրա կազմակերպման համար²:

¹ Տես XIX), , - ., 1985, . 26:

(50-70 .

² Տես Noradoungian G., D'Actes internationaux de l'Empire Ottoman, Tome Deuxième (1789-1856), Paris: Cotillon a. o., 1900, p. 288-290: Տես նաև , 1826

1856 . 2:
1856 ., .1872, . 274-278:

Մեծ տերությունները ողջունեցին բարենորոգումների ծրագիրը: Ինչպես ֆրանսիական, այնպես էլ բրիտանական դիվանագիտությունը լիովին պաշտպանում և նպաստում էր Օսմանյան պետական գործիչների բարենորոգչական ծրագրերի իրականացմանն ազգային հարցում, քանի որ դրանով կարելի էր կանխել ազգային-ազատագրական շարժումները, որոնց ծավալումը կարող էր մեծացնել Ռուսաստանի ազդեցությունը: 1840-ական թթ. Օսմանյան կայսրության՝ քրիստոնյաների նկատմամբ վարվող քաղաքականությունն ամեն կերպ նպատակ էր հետապնդում չնչին օրենսդրական գիշումներով քրիստոնյա ազգաբնակչությանը «կապել» իշխանություններին: Այս քաղաքականության իրականացումը մեծապես կապված էր «հավասար վերաբերմունքի» և մինչև Ղրիմի պատերազմի սկիզբը դրա հետ գուգակցվող «սուլթանի բոլոր հպատակների միասնության սկզբունքների հետ¹: Իրականում թուրքական իշխանությունները ննան քաղաքականությանը նպատակ ունեին լուծել երեք հիմնական խնդիր:

ա. Քրիստոնյաների ուշադրության շեղում ազատագրական պայքարից,

բ. Բոլոր հպատակների հավասարության և միասնականության կեղծ ցուցադրություն,

գ. Օգտագործել բոլոր հպատակների համախմբված պայքարը կայսրության թշնամիների, առաջին հերթին՝ Ռուսաստանի դեմ:

1850-ական թթ. սկզբին Արևելյան հարցի սրումը հանգեցրեց Ղրիմի պատերազմին (1853-1856 թթ.): Պատերազմի ընթացքում ուժեղացան քրիստոնյա ժողովուրդների ազգային շարժումները: 1853 թ. վերջին և 1854 թ. սկզբին սաստկացան ժողովրդական ելույթները Բուլղարիայում, 1854 թ. հունվարից աննախադեպ հակառակ քաղաքական շարժումներ եղան Եպիրոսի, Թեսալիայի և Եգեյան կղզիների հույների շրջանում: Պատերազմի ընթացքում և հետո զգալիորեն աճեց Ֆրանսիայի և Մեծ Բրիտանիայի ազդեցությունը Օսմանյան կայսրության վրա, փոխարենը սասանվեց Ռուսաստանի միջազգային հեղինակությունը: Մինչև Փարիզի պայմանագրի ստորագրումը 1856 թ. փետրվարի 18-ին իրապարակվեց սուլթանի՝ կայսրության փոքրամասնությունների արտոնություններին վերաբերող շնորհագիրը՝ Յարթը հումայունը, իսկ երեք օր անց՝ փետրվարի 21-ին, թուրքական տեղական մամուլում հայտնվեց շնորհագրի տեքստը հունարեն, հայերեն, եբրայերեն, ֆրանսերեն և անգլերեն²: Մեծ տերությունները ձգտում էին պահպանել Օսմանյան կայսրության ամբողջականությունն ու կանխել ազատագրական շարժումների ծավալումը, Ռուսաստանի դերի մեծացումը: Նրանք տասնյակ միլիոնների հասնող ներդրումներ ունեին կայսրության տնտեսության մեջ, ուստի օսմանյան թուրքիայի կայունությունը պետք էր առաջին հերթին հենց նրանց: Բավական է նշել, որ 1856 թ. դրությամբ միայն Ֆրանսիան Օսմանյան կայսրություն էր ներմուծվում 91.9 մլն ֆրանկի և արտահանում 131.5 ֆրանկի ապրանք, իսկ Մեծ

¹ Տես

.. նշվ. աշխ., էջ 26-30:

² Տես

. 242:

Բրիտանիան՝ համապատասխանաբար 141.3 մլն և 80 մլն¹: Յաթթը հումայունի բովանդակությունը հիմնականում աճրագրում էր Յաթթը շերիֆով տրված իրավունքները, չնայած ուներ որոշ հավելումներ: Մասնավորապես ազգային համայնքները ներկայացուցություն էին ունենալու ընդհանուր բաժինների վարչական խորհուրդներում, երկրի գավառներում, իսկ այլ պետությունների քաղաքացիներն իրավունք էին ստանում անշարժ գույք ձեռք բերելու Օսմանյան կայսրության տարածքում²:

Օսմանյան կայսրությունում բարենորոգչական շարժումը մեծ ազդեցություն ունեցավ նաև քրիստոնյա համայնքների ներսում: Ինչպես արևմտահայության մեջ, օսմանահպատակ հույնների մոտ էլ սկսվեց «Սահմանադրական շարժում»: Այն ուներ գրեթե նույն շարժաւիթներն ու պատճառները: Մասնավորապես Կոստանդնուպոլսում հունական աշխարհիկ մտավորականությունն ու գործարար հատվածի վերնախավն այլ պատկերացումներ ուներ միլեթի կառավարման հարցի վերաբերյալ: Հունական միջին դասը պայքարում էր միլեթի համակարգի օլիգարխիկ կառուցվածքի ժողովրդավարացման համար: Հունական կղերական իշխանություններն այնքան էլ խանդավառված չեն բարենորոգչական շարժմամբ: Նրանք դիմադրում էին փոփոխություններին, որի նպատակն էր ավելացնել աշխարհիկ ներկայությունը համայնքային գործերի կառավարման մեջ³:

Այնուամենայնիվ, 1856 թ. հետո համայնքի ներսում բարենորոգումն անխուսափելի դարձավ: Յանաձայնեցնելով կառավարության հետ՝ ստեղծվեց Սահմանադիր ժողով՝ կազմված յոթ արքեպիսկոպոսից և քսաննեկ աշխարհիկ անդամից (տասը՝ մայրաքաղից, տասննեկը՝ նահանգներից), որոնք հանդիպեցին 1857 թ. ապրիլին Կոստանդնուպոլսում: Սահմանադիր ժողովը կոչվեց նաև «Ազգային խորհուրդ»: Սակայն աշխատանքներն այնքան էլ հարթ չեն ընթանում: Դրա արդյունքում 1859 թ. հուլիսին հրաժարական են տալիս իինգ ավագ արքեպիսկոպոսներ, իսկ մեկ տարի անց՝ նաև պատրիարք Կիրիլ 2-րդը (1855-1860): Նրա հաջորդ խոսկիմ 2-րդն (1860-1863) առավել կառուցողական դիրք է գրավում բարենորոգչական շարժման նկատմամբ: Ի վերջո կազմվեց բարեփոխված «Սահմանադրության» տեքստը և 1862 թ. Հունական ուղղափառ միլեթի կողմից ներկայացվեց Բ. Դաշունը: Յաջորդ տարի Օսմանյան կառավարությունը վավերացրեց հունական «Գլխավոր Ազգային կանոնադրությունը» (« / μ »)⁴: Հույնների համար այն որոշակի ձեռքբերում էր

¹ Նույն տեղում, էջ 50:

² Stéu Noradoungian G., D'Actes internationaux de l'Empire Ottoman, Tome Troisième (1856-1878), Paris: Cotillon a. o., 1902, p. 83-88:

³ Երկյուղ կրելով ուղղափառ միլեթի նկատմամբ կղերական իշխանության թուլացումից՝ հունական բարձրագույն հոգևորականությունն առաջարկում էր շարունակել և զարգացնել «gerondismos»-ի համակարգի հաստատումը, որն ապահովում էր հոգևոր գերիշխանություն միլեթին վերաբերող բոլոր գործերի նկատմամբ: Յանակարգի անունը գալիս էր «gerondes» (բարձրաստիճան արքեպիսկոպոս կամ միտրոպոլիտ) եղբից: «Gerondes» էին համարվում Կեսարիայի, Եփսոսի, Ջերակլեայի (Երեզլի), Սիզիկոսի (Երդեկ), Նիկեայի (Իզմիկ), Նիկոմեդիայի, Քաղկեդոնի (Կադիչյոյ) և Դերկոսի (Տերկոն) արքեպիսկոպոսները: Stéu Alexandris A., The Greek Minority of Istanbul and Greek-Turkish Relations 1918-1974, Athens: Centre for Asia Studies, 1992, p. 33.

⁴ Alexandris A., նշվ. աշխ., էջ 33:

համայնքային գործերում Եկեղեցականների ունեցած մենաշնորհի դեմ պայքարում¹: Սակայն համեմատելով արևմտահայերի Ազգային սահմանադրության հետ՝ ներհամայնքային կյանքում այն չունեցավ այնքան մեծ հնչեղություն²: Չնայած Թանգիմարի՝ իր ժամանակի համար առաջադիմական դերին, այնուամենայնիվ, ինչպես Հաթթը շերիֆի, այնպես էլ Հաթթը հումայունի հետապնդած գլխավոր նպատակը կայսրության բոլոր հպատակների աստիճանական ծովումն էր³: Այլ կերպ ասած՝ այստեղ դրսևոր վում էին օսմանիզմի գաղափարախոսության ակունքները: Ի վերջո խնդիրը կայսրության պահպանումն էր, իսկ ազգությունների ծովումն այդ խնդիրի լուծման ամենահարմար տարրերակը կլիներ: Դրա լավագույն ապացույցը բարենորոգումների գլխավոր գործիչներից մեկի՝ Ֆուադ փաշայի քաղաքական կտակն էր՝ ուղղված Աբդուլ Ազիզ սուլթանին: Խոսելով Օսմանյան կայսրության հպատակ ժողովուրդների մասին՝ նա համոզնումք է հայտնում, որ բնավ պետք չէ մտածել քրիստոնյաներին ինքնավարություն, առավել ևս անկախություն տալու մասին: Բերելով Յունաստանի օրինակը՝ Ֆուադ փաշան նշում է. «Պետք չէ մոռանանք Յունաստանին՝ ինքնին անկարուր մի երկիր, բայց ձանձրացուցիչ մի գործիք թշնամի պետություններին ձեռքում: Եվրոպացի բանաստեղծները, կազմելով այս ուրվական թագավորությունը, կարծեցին, թե պետք է կարողանային վերակենդանացնել մի ազգի, որ երկու հազար տարուց ավելի մեռել էր արդեն... Յելլենական ցեղի ոգին միշտ մեր դատի թշնամին պետք է լինի... Այս նենգավոր և չարասիրտ ժողովրդի ոտնձգությունների դեմ լավագույն պաշտպանությունն իր եաերելի սնափառության և բացարձակության մեջ է, որոնցով նա մեր բոլոր արևելյան ազգերի աչքում օրեցօր ավելի ատելի, ավելի անտանելի է դառնում: Մեր քաղաքականության նպատակը պետք է լինի հնարավոր չափով անջատել հույններին մեր մյուս քրիստոնյաներից: Ամեն բանից ավելի՝ մենք պարտավոր ենք բուլղարներին հեռացնել հույն Եկեղեցու տիրապետությունից՝ առանց նրանց կցելու ռուս կամ հռոմեական կղերականությանը»⁴:

Չնայած Օսմանյան կայսրությունում քրիստոնյա փոքրամասնությունների, տվյալ դեպքում հույնների իրավագուրիկ վիճակին՝ ամբողջ 19-րդ դարում և հատկապես Թանգիմարի առաջին փուլից հետո օսմանյան պետական համակարգում երևացին մարդիկ, որոնք լինելով ազգությամբ հույններ և հայեր, հասան նշանակալի հզորության և ազդեցության: Յուններից հատկապես աչքի էին ընկնում

¹ Ակսած 1863 թ. Պատրիարքը համայնքային գործերը վարում էր՝ համաձայնեցնելով Մշտական խառը (քաղադրյալ) ազգային խորհրդի հետ (« μ »): Խորհուրդը բարկացած էր չորս ավագ եաիսկոպոսից և ութ աշխարհիկ անդամից՝ ընտրված կոստանդնուպոլիսան հույններից: Մրրազան Մինողի (« ») տասներկու ավագ արքապիսկոպոսների հետ այս երկու պատրիարքական խորհուրդները կազմում էին «Եկեղեցու երկու մարմինները» (« μ »): Խառն ազգային խորհուրդը պատրիարքի հետ տնօրինում էր ներհամայնքային բոլոր գործերը: Տես Alexander A., նշվ. աշխ., էջ 33-34:

² Կանոնադրության տեքստի հայերեն թարգմանությունը տես Փափազյան Ավ., Թուրքական վավերագրական նյութեր Օսմանյան կայսրության ոչ մահմեդական ժողովուրդների մասին (1839-1915), Երևան, «Զանգակ-97», 2002, էջ 51-89:

³ Տես

.., նշվ. աշխ., էջ 49:

⁴ «Արօր», Ա տարի, N6, 1910, էջ 184:

Կոստանդնուպոլիսյան Արհստարիսիսների, Կարաթեռողորոսների, Մուսուլոսների հոչակավոր գերդաստանները, որոնք Օսմանյան պետությանը տվել են պատրաստված և մեծանուն գործիչներ: Այսպես, Բ. Դուան վերջին հույն դրագոնան Ստավրոս Արհստարիսիս (1770-1822) որդիներից Նիկոլաս Արհստարիսիս (1799-1866) Աքդուլ Մեջիդ և Աքդուլ Ազիզ սուլթանների դաստիարակն է եղել, իսկ նրա եղբայր Միլիհադիս Արհստարիսիս 1861-1866 թթ. Սամոսի կառավարիչն էր: Նրանց մյուս եղբայր Զոն Արհստարիսիսը, ով Օսմանյան պետությանը ծառայեց մոտ 50 տարի, գլխավորապես Բեռլինում որպես օսմանյան դեսպան, ճանաչվեց Բ. Դուան գլխավոր դիվանագետ: Ստավրոս Արհստարիսիսի թոռը (Նիկոլասի որդին), ով կրում էր պապի անունը, 1877 թ. մարտի 17-ին դարձավ Սենատի անդամ և այն երեք անդամներից մեկն էր, որ ներկա էր նաև 1908 թ.-ի Սենատում¹: Ընտանիքի մեկ այլ անդամ՝ Գրիգորի Արհստարիսիսը, գլխավորում էր օսմանյան միսիան Վաշինգտոնում և նշանավոր դարձավ Օսմանյան պետության օրենսդրությանը վերաբերող 7 հասորանց կոռողային մի աշխատությանը (G. Aristarchi Bey, *Législation ottomane, ou recueil des lois, règlements, ordonnances, traités, capitulations, et autres documents officiels de l'Empire Ottoman, 7 vols., Constantinople, 1873-1888*): 19-րդ դարի Օսմանյան կայսրության ամենահոչակավոր դիվանագետներից էր Ալեքսանդր Կարաթեռողորիսիս (1833-1906): Նա Միդիատ փաշայի մոտ ընկերն էր, սուլթան Աքդուլ Ջամիլ 2-րդի խորհրդատուն արտաքին գործերում: 1874 թ. Ա. Կարաթեռողորիսիս նշանակվեց դեսպան Յոզոնում, իսկ 1876 թ.² փոխարտգործնախարար: Նրա՝ որպես մեծանուն դիվանագետի փառքն աշխարհում տարածվեց հատկապես 1878 թ. Բեռլինի կոնգրեսից հետո, որտեղ նա գլխավորում էր օսմանյան պատվիրակությունը²: 1878 թ. Ա. Կարաթեռողորիսիս նշանակվեց արտգործնախարար, սակայն հակասություններ ունենալով սուլթանի հետ, շուտով հրաժարական տվեց: Նա դարձել է նաև Կրետեի առաջին քրիստոնյա կառավարիչը (1895-1896): Կարծ ժամանակով Ա. Կարաթեռողորիսին աշխատել է որպես կայսրության հանրային աշխատանքների նախարար:

Չնայած իրենց ծագմանը՝ Օսմանյան պետական համակարգում ծառայող հույնները պաշտպանում էին առաջին հերթին Թուրքիայի շահերը: Պատահական չէ, որ հունական մեկ այլ նշանավոր գերդաստանի ներկայացուցիչ՝ Կոստանդին Մուսուրոսը, դեսպան նշանակվեց Յունական թագավորությունում (1840-1848) և խստորեն պաշտպանում էր կայսրության շահերը: Մեկ այլ հույն դիվանագետ՝ Զոն Ֆուտիհադիսի, Աքենքում Օսմանյան կայսրության դեսպանն էր 1860-ական թթ. Կրետեի ճգնաժամի ժամանակ: Նա 1868 թ. դեկտեմբերի 17-ին հեռացել էր Աքենքից՝ որպես բողոքի նշան Կրետեի հարցում Յունաստանի բռնած դիրքի նկատմամբ³: Յուների համար կարծես «մենաշնորհ» էր դարձել Մեծ Բրիտանիայում օսմանյան դեսպան ծառայելը⁴:

¹ Alexandris A., նշվ. աշխ., էջ 28:

² Նույն տեղում:

³ Նույն տեղում:

⁴ Այդ դեսպաններն էին Կոստանդին Մուսուրոսը (1856-1891), Կոստանդին Անթոպուլոսը (1891-1902) և Ստեփան Մուսուրոսը (Կոստանդինի որդին) (1902-1907):

Այնուամենայնիվ, բոլոր այս դեպքերը վերաբերում էին առանձին ընտանիքներին և մարդկանց. պետական համակարգում հույների կամ այլ քրիստոնյաների ներկայությունը չնշին էր:

Դրիմի պատերազմից հետո էլ Արևելյան հարցը շարունակում էր օրակարգային խնդիր մնալ ինչպես Օսմանյան կայսրության, այնպես էլ մեծ տերությունների համար: Դա պայմանավորված էր մեծ տերությունների ծգտմամբ՝ քաղաքական ու տնտեսական ազդեցություն հաստատել Թուրքիայում: Այս ամենը հետևանք էր բարեփոխումների՝ թղթի վրա մնալուն: Օսմանյան կայսրությունը չէր կարողանում հաղթահարել իր իսլամական բնույթը, կյանքի կոչել մահմեդականների ու ոչ մահմեդականների իրավահավասարության դրույթը: Ավելին, իրենց հիմնական խնդրի՝ կայսրության ամբողջականության պահպաննան ուղղված իրական քայլը եղավ ոչ թե Թանգիհմաթի սկզբունքների իրագործումը, այլ ավելի հետադիմական դիրքորոշումը: Դրա դրսևորումներից էր 1860 թ. Սիրիայի քրիստոնյաների դաժան կոտորածը, 1862 թ. ապստամբությունները Զեյթունում ու Յերշեգովինայում և, վերջապես, 1866-1869 թթ. Կրետական ապստամբությունը¹:

Կրետեում ապստամբության պատճառներից էին հարկերի աճը և Հարթը հումայունով տրված խոստումները չկատարելը: Բացի այդ մեծ դեր էր խաղացել 1863 թ. Յոնիական կղզիների միացումը Յոնաստանին: Կրետե կղզին այդ ժամանակ ուներ 300.000-320.000 բնակչություն, որի մեծամասնությունը՝ շուրջ 250.000-ը, հույն էր²: 1866 թ. մայիսին կրետացի հույները կազմեցին հուշագիր՝ ուղղված սուլթանին, որում բողոք էր արտահայտվում հարկահավաքության հարցերի շուրջ: Նշվում էր, որ 1864-1865 թթ. հարկերը հավասար էին իրենց եկամուտներին, որ կղզում չկան դպրոցներ ու հիվանդանոցներ, իսկ տեղական իշխանությունները խախտում են 1856 թ. Հարթը հումայունով հրչակած սկզբունքները, որոնք փաստորեն գրեթե հայտնի չեն կղզում³: Խաղաղ հուշագրի պատասխանը Կոստանդնուպոլսից եղավ 1866 թ. թուրք-Եգիպտական զորք Կրետե ուղարկելը: Կղզու հույները ստիպված էին զենք վերցնել: 1866 թ. սեպտեմբերի 2-ին կրետացիների՝ Սֆակիայում գտնվող Գլխավոր ասամբլեան հրչակեց Կրետեի անկախությունը Օսմանյան կայսրությունից և նրա միացումը Յելլենական թագավորությանը՝ հելլենների արքա Գևորգ 1-ինի իշխանության ներքո⁴: Սա արդեն ապստամբության բացահայտ սկիզբն էր: Ակսած 1866 թ. մինչև 1869 թ. կղզին շարունակական կրիվների թատերաբեմ էր: Ապստամբության

¹ Տե՛ս „ 1866-1869 ., : « », 1970, . 28:

² , XVIII - XX ., : « »,

1978. . 168.

Նշված թիվը տրվում է ըստ թուրքական և հումական կառավարությունների: Սակայն հետաքրքիր է, որ ապստամբության ժամանակ կղզու հույն և թուրք բնակչության թվի հարաբերակցության հարցը թերեց քաղաքական նշանակություն: Նարցի ուսումնասիրմամբ սկսեցին զբաղվել ոչ միայն հումական և թուրքական կառավարությունները, այլև օտարերկոյա դիվանագետները: Ուսական հյուպատոսության տվյալներով կղզու բնակչության թիվը տատանվում էր 260.000-280.000-ի միջև, որի 1/4-ը թուրքեր էին: Տե՛ս „, նշվ. աշխ., էջ 21:

³ „, նշվ. աշխ., էջ 32:

⁴ Marriott J., նշվ. աշխ., էջ 376.

ամենաողբերգական էօթից են 1866 թ. աշնանն Արկադիոն վաճքի դեպքերը¹: Նոյեմբերին վաճքի շրջանում մարտ տեղի ունեցավ Մուստաֆա փաշայի Ռետիմնո շարժվող 15 հազարանոց զորքի և փոքրաթիվ ապստամբների միջև: Վաճքում ապաստանել էր 900 փախստական, որոնցից 250-ը հիվանդ և վիրավոր էր: Նոյեմբերի 21-ին թուրքական զորքը մտավ վաճք: Վաճքի պաշտպանների դեկավարներից Գավրիլոսի որոշմամբ նրանք պայթեցրին վառողի պաշարները՝ իրենց կյանքի գնով ոչնչացնելով բազմաթիվ թուրք զինվորների: Սակայն ի վերջո վաճքի ներքին շինություններում թաքնված կանայք, երեխանները և ծերունիներն ընկան թուրքերի ձեռքը և սպանվեցին: Չոհերի թիվը գերազանցում էր 400-ը²:

1867 թ. համարվում է Կրետական ապստամբության ամենահերոսական փուլը: Ամբողջ տարվա ընթացքում ապստամբները մի շարք փայլուն հաղթանակներ տարան թուրքերի դեմ: 1867 թ. փետրվարի 14-ին Կրետեի Գլխավոր ասամբլեան ընտրեց Կրետեի ժամանակավոր կառավարություն, իսկ մայիսին հրապարակեց Կրետեի Սահմանադրությունը՝ բաղկացած 10 կետից: Դրա համաձայն օրենսդիրի իշխանությունը պատկանում էր Կրետե կղզու Ասամբլեային, գործադիրը՝ Ասամբլեայի կողմից ընտրված նախագահին: Կրետեի նախագահ և գլխավոր հրամանատար ընտրվեց Դմիտրիոս Մավրոկորդատոսը՝ Հունաստանի նախկին արտգործնախարարը³:

1867 թ. հոկտեմբերի 4-ին անսպասելիորեն կղզի ժամանեց մեծ վեզիր Ալի փաշան: Յինգ ամիս գլխավորելով ապստամբների դեմ ռազմական գործողությունները՝ 1868 թ. մարտի 1-ին Արդուլ-Ազիզ սուլթանին ներկայացրեց հաշվետվություն՝ Կրետեում իր առաքելության մասին: Նա, ստիպված լինելով ընդունել, որ իրեն չի հաջողվել հասնել ընքոստ Կրետեի խաղաղեցմանը, այնուամենայնիվ համարում էր, որ իր առաքելությունը չի կարող հանարկել չհաջողված⁴:

Ապստամբության ամբողջ ընթացքում օգնություն էր գալիս Հունաստանից՝ սննդամբերքի և ռազմամբերքի տեսքով: Հունաստանում մեծ ոգևորություն կար՝ կապված կրետական դեպքերի հետ: Մեծ տերություններից միայն Ռուսաստանն էր կողմնակից Կրետեի միավորմանը Հունաստանին: Պատահական չէ, որ դեռևս 1867 թ. Ալեքսանդր 2-րդը Ֆուադ փաշայի հետ հանդիպման ժամանակ նշել է, որ Կրետեի հանձնումը Հունաստանին հարցի միակ հնարավոր լուծումն է և այն հիմքը, որ կրարելավի ռուս-թուրքական հարաբերությունները⁵: Մինչդեռ Ֆրանսիան և Մեծ Բրիտանիան ավելի կողմնակից էին Կրետեն տեսնել Օսմանյան կայսրության կազմում, քանի որ վախենում էին Ռուսաստանի դերի մեծացումից⁶:

¹ Արկադիոն վաճքը գտնվում էր Ռետիմնոյի (այժմ՝ Ռետիմնիս) շրջանում և կրետացիների կարևոր պատմամշակութային կենտրոններից էր: Ապստամբության սկզբից այստեղ էին պահվում ռազմամբերքի պաշարները:

² ., նշվ. աշխ., էջ 52:

³ Նույն տեղում., էջ 77:

⁴ Նույն տեղում, էջ 151-152:

⁵ Նույն տեղում, էջ 139:

⁶ Տե՛ս

..., . 170-171:

Կրետական ապստամբությունը մեծ լարվածություն էր առաջացրել Հունաստանի և Թուրքիայի հարաբերություններում: 1868 թ. դեկտեմբերին Օսմանյան կայսրությունը խզեց դիվանագիտական հարաբերությունները Հունաստանի հետ՝ Աթենքին մեղադրելով ապստամբության նախաձեռնության համար: Ֆրանսիայի նախաձեռնությամբ Փարիզում 1869 թ. հունվարին տեղի ունեցավ հույն-թուրքական հարաբերությունների հարցի քննարկում: Չնայած հունական կողմի վճռականությանը՝ խորհրդաժողովն ամրագրեց Թուրքիայի «հաղթանակը» կրետացիների նկատմամբ և Հունաստանից պահանջեց դադարեցնել օժանդակությունն ապստամբներին¹: Անօգնական մնալով՝ կրետացիները ստիպված էին դադարեցնել իրենց պայքարը:

Կրետական ապստամբության ճնշումով չդադարեց Օսմանյան կայսրության հպատակ ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարը: Ակնհայտ դարձավ, որ բարեփոխումների վերաբերյալ օսմանյան իշխանությունների խոստումները մնացին չիրագործված: 1875 թ. ամուանն ապստամբություն բրոնկվեց նախ Հերցեգովի-նայում, ապա Բոսնիայում: Այն առաջացրեց միջազգային խոր ճգնաժամ, որը հաճախ անվանվում է 1875-1878 թթ. Մերձավորարևելյան ճգնաժամ²: 1876 թ. ապրիլին իրավիճակն ավելի բարդացավ, քանի որ թուրքական տիրապետության դեմ ապստամբեց Բուլղարիայի, Սերբիայի և Չեռնոգորիայի բնակչությունը: Թուրքական իշխանությունների դաժան հակահարվածը չուշացավ: 1876 թ. Բուլղարիայում կոտորվեց 15 հազար մարդ³, ավելի 60 գյուղ⁴:

Ճգնաժամի հաղթահարման նպատակով Կ. Պոլսում հրավիրվեց համաժողով մեծ տերությունների նախակցությամբ: Կանխելու համար մեծ տերությունների առաջարկների քննարկումը և իրագործումը՝ Բ. Դուռը 1876 թ. դեկտեմբերի 23-ին հայտարեց Օսմանյան կայսրության առաջին Սահմանադրության հոչակման մասին, իսկ 1877 թ. հունվարի 20-ին փակվեց Կ. Պոլսի համաժողովը: Օսմանյան առաջին սահմանադրությունը մեծապես կապված էր Միդիատ փաշայի և նոր օսմանների ծավալած գործունեության հետ: 119 հոդվածից բաղկացած Սահմանադրությունը հագեցած էր օսմանիզմի գաղափարախոսությամբ: Այսպես, 17-րդ հոդվածի համաձայն բոլոր հպատակները, անկախ ազգությունից և կրոնից, հոչակվում էին «օսմաններ»: Առաջին հոդվածի համաձայն թուրքերենը հայտարարվում էր պետական լեզու, իսկ 16-րդ հոդվածով իսլամը՝ պաշտոնական կրոն⁵: Ընդհանուր առմամբ

¹ Նույն տեղում, էջ 174:

² Տես (1872 – 1919), , , , - , , , ,

³ Նույն տեղում, էջ 28:

⁴ Walker Chr., Armenia: The Survival of a Nation, New York: St. Martin's Press 1980, p. 107.

Կոտորված քրիստոնյաների ճշգրիտ թիվը դժվար է որոշել: Օրինակ, Մեծ Բրիտանիայի դեսպանի արտգործնախարարին ուղղված հաղորդագրության մեջ նշվում է, որ կոտրվել է 10.000 կամ 20.000 մարդ: Տես Yale W., The Near East, A Modern History, Michigan: The University of Michigan Press, 1958, p. 85.

Իսկ ամերիկյան հյուպատոսը 1876 թ. օգոստոսի 10-ին Կ. Պոլսի ամերիկյան դեսպանին հաղորդում է, որ գնիերի թիվը եղել է 15.000: Տես Tashjian J., Turkey: Author of Genocide, The Centenary Record of Turkey 1822-1922, 212 Stuart Street, Boston, Massachusetts, 1965, p. 8.

⁵

, նշվ. աշխ., էջ 109:

այն առաջադիմական երևույթ էր իր ժամանակի համար, սակայն վրա հասավ 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը, և ռազմական անհաջողությունները պատրվակ բռնելով՝ Արդուլ Համիդը 1878 թ. փետրվարի 14-ին հրամայեց դադարեցնել առաջին Օսմանյան խորհրդարանի աշխատանքները: Իրավահավասարության խնդիրը մնում էր չլուծված:

Սահմանադրությունը չվերացրեց միլերների համակարգը, որը քաղաքական և իրավական անհավասարության հիմքն էր: Իսկ Սահմանադրության կասեցունով ավարտվեցին օսմանյան բարեփոխումների անհաջող փորձերը: Ավելին, բարեփոխումները մահմեդական բնակչության կողմից ընկալվեցին իրեն վիրավորանք և ազգային արժանապատվության ոտնահարում: Դա դրսորվեց դեռևս 1839 թ. Հաթթը շերիֆից հետո, երբ 1841 թ. Տրապիզոնի հույները Թանգիմարի բարենորոգումների համաձայն իրավունք ստանալով՝ վերանորոգեցին իրենց Եկեղեցին, իսկ մահմեդական նոլեռանդ ամբոխն ավերեց Եկեղեցու վերանորոգված հատվածը¹: 1876 թ. հետո տեղի ունեցավ հակաքրիստոնեական տրամադրությունների ավելի կտրուկ աճ, որն աստիճանաբար ընդունում էր քրիստոնյաների ֆիզիկական ոչնչացման կոչերի ձև²:

Այս շրջանում բավական ակտիվացան Հունաստանի հայրենասիրական-ազգայնական շրջանակները: Նրանք կարծում էին, որ հարմար պահն է կյանքի կոչելու Մեծ Հունաստանի գաղափարը՝ «Մեծ տեսլականը» (հուն՝ « »), որը հունական հողերի ազատագրման և Մեծ Հունաստանի վերականգնման ծրագիրն էր եգեյան ծովի երկու ափերին³: Հունական կառավարությունն իր պարտքն էր համարում աջակցել Եպիրոսում, Թեսալիայում, Կրետեում, նաև Մակեդոնիայում 1878 թ. սկզբներին ծագած ապստամբական ելույթներին՝ հույս ունենալով, որ դրանք կվենտրոնացնեն մեծ տերությունների ուշադրությունը Հունական հարցի վրա և կծառայեն Արևելյան ճգնաժամի վերջնական լուծմանը: Արենքն օժանդակություն էր ցույց տալիս երկու կազմակերպություններին (Եթերիաներ)՝ «Ազգային պաշտպանություն» (« ») և «Եղբայրություն» (« »), որոնք հիմնվել էին Հունաստանում և կազմված էին կրետացի, թեսալացի և էպիրոսցի վտարանդիներից⁴: Նրանց նպատակն այդ

¹ Տե՛ս Սաֆրաստյան Ռ., Օսմանյան կայսրություն. Ցեղասպանության ծրագրի ծագումնաբանությունը (1876-1920), Եր.: «Լուսակն» հրատ., 2009, էջ 118:

² Նույն տեղում, էջ 162-163:

³ Գաղափարը նոր չէր. այն եական դեռ է կատարել հունական պետության արտաքին քաղաքանության մեջ՝ սկսած անկախության վերականգնման շրջանից: Քաղաքագետ հ. Կոլետիսը 1844 թ. հունվարին Ազգային ասսամբլեայում բարձրածայնեց այս գաղափարախոսության հիմնական դրույթները. «Հունաստանի քաղավորությունը դեռ Հունաստան չէ, այն պարզապես նրա մի նաևն է, ամենափոքը, ամենախեղն մասը: Հույնը միայն նա չէ, ով ապրում է քաղավորությունում, այլ նաև նա, ով բնակվում է Յանինայում, Սալոնիկում, Սերետում, Աղրիանապոլտում, Տրապիզոնում, Կրետեում, Սամսունում կամ ցանկացած շրջանում, որ պատկանում է Հունական պատմությանը կամ հունական ցեղին... Գոյություն ունի հելլենիզմի երկու խոշոր կենտրոն: Արենքն թագավորության մայրաքաղաքն է: Կոստանդնուպոլիսը մեծ մայրաքաղաքն է՝ բոլոր հույների երազն ու հոյսը»: Տե՛ս Smith M. L., Ionian Vision: Greece in Asia Minor, 1919-1922, New York: St. Martin's Press, 1973, p. 2-3.

տարածքների ազատագրումն էր: Եվ ընդհանրապես այդ շրջանների համար պայքարը հունական թագավորության արտաքին քաղաքականության հիմքն է եղել մինչև 1912-1913 թթ. Բալկանյան պատերազմները:

Ի վերջո 1878 թ. փետրվարին Կունունդուրոսի կառավարությունը հրամայեց հելլենական բանակը մտցնել Թեսալիա¹, սակայն արդեն ուշ էր: Ռուսների կողմից Աղոթանապոլսի գրավումից հետո՝ հունվարի 31-ին, պատերազմող կողմերի միջև զինադադար ստորագրվեց: Ուստի անմիջական սպառնալիք ստեղծվեց, որ թուրքական ազատ գորածուկատները կուղարկվեն Թեսալիա: Հույները ստիպված էին հետ քաշվել, և միայն մեծ տերությունների միջամտությունը խոչընդոտեց, որ թուրքիան Հունաստանին պատերազմ հայտարարի: 1878 թ. փետրվարի 19-ին (մարտի 3-ին) Ռուսաստանի և Օսմանյան կայսրության միջև կնքված Սան-Ստեֆանոյի պայմանագիրը չընդունվեց մեծ տերությունների կողմից, և Արևելյան հարցի վերջնական կարգավորումը տեղափոխվեց մինչև Բեռլինի կոնգրես:

Մեծ տերությունների Բեռլինյան վեհաժողովը տեղի ունեցավ 1878 թ. հունիսի 13-ից հուլիսի 13-ը: Բեռլին էին ժամանել նաև Հունաստանի, Սերբիայի, Չեռնոգորիայի, Ռուսմինիայի և Կ.Պոլսի Հայոց ազգային պատվիրակությունները: Սակայն միայն հունական և ռումինական պատվիրակություններին առանձին նիստերի ընթացքում ելույթներ ունենալու իրավունք տրվեց²: Հունական պատվիրակությունը պահանջում էր Թեսալիան, Եպիրոսը, Կրետեն և չեղ թաքցնում իր հավակնությունները Մակեդոնիայի, Թրակիայի և մի քանի այլ շրջանների նկատմամբ³:

Հունիսի 13-ից մինչև հուլիսի 4-ը վեհաժողովի նիստերին քննարկվում էին Սան-Ստեֆանոյի պայմանագրի՝ Բալկաններին և սկզբվան նեղուցներին վերաբերող հոդվածները: Հաստատվեց Ռուսմինիային, Սերբիային և Չեռնոգորիային տրված անկախությունը: Բալկանյան լեռնաշղթայից հյուսիս ստեղծվեց Բուլղարական իշխանություն, իսկ հարավային Բուլղարիան՝ Արևելյան Ռումելիա անունով, մնաց Օսմանյան կայսրության կազմում: Ավստրո-Հունգարիան իրավունք ստացավ բոնազավել Բոսնիան և Յերցեգովինան⁴: Հույն-թուրքական հարաբերությունների քննարկման արդյունքում որոշվեց, որ եթե Հունաստանը և Օսմանյան կայսրությունը փոխհամաձայնության չհասնեն սահմանների ճշտման հարցում, մեծ տերություններն առաջարկելու են իրենց միջնորդությունը բանակցությունների ընթացքում⁵: Սակայն Բեռլինի կոնգրեսը կոնկրետ լուծում չուվեց Հունաստանի կողմից պահանջվող տարածքների խնդրին: Եվ դա այն դեպքում, եթե Հունական թագավորությունում էր

¹ Svoronos N., Histoire de la Grèce moderne, Paris: Presses Universitaires de Paris, 1964, p. 79.

² 1895, , 1896,
. 38.

³ Svoronos N., Աշվ. աշխ., էջ 79:

⁴ Տես
1878 ., : , 1979, . 132.
1875-

⁵ Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովորական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923) (Պրոֆ. Զ. Ս. Կիրակոսյանի խմբագրությամբ), Երևան, 1972, էջ 116:

ապրում հույն ժողովրդի միայն կեսից պակասը¹: Միայն 1881 թ. Կ. Պոլսում ստորագրված հույն-թուրքական պայմանագրի համաձայն Օսմանյան կայսրությունը Հունաստանին զիջեց Թեսալիան և Արտայի շրջանը²:

1876 թ.՝ Աբրուլ Յամիդ 2-րդ սուլթանի իշխանության գալուց հետո, Օսմանյան կայսրության ազգային հարցում որդեգրվեց ավելի հետադիմական քաղաքականություն, որի արդյունքը եղավ 1894-1896 թթ. շուրջ 300 հազար հայերի կոտորածը³: Չնայած ջարդերը հիմնականում ուղղված էին հայերի դեմ, սակայն որանք ընդգրկեցին նաև ասորիներին⁴: 1894-1896 թթ. ջարդերն ուղղված էին Արևմտյան Հայաստանը հայաթափելուն: Հույները, որպես կանոն, գերծ մնացին կոտորածներից: Աբրուլ Յամիդը խուսափում էր Հունաստանի հետ հարաբերությունների նոր բարդացումից: Ավելին, ձգտելով հույներին հեռու պահել հայկական ջարդերից, նա նպատակ ուներ հայկական պահանջը ներկայացնել որպես ոչ անհրաժեշտ ու ոչ տեղին, քանի որ այն ընդգրկում էր ոչ բոլոր փոքրանանություններին⁵: «Հունանպաստ» քաղաքականության փայլում դրսեւորում էր այն, որ 1895 թ. կեսերին սուլթանը նորընտիր տիեզերական պատրիարք Ասթիմոս 7-րդին (1895-1897) պարգևատրեց Մեջիդեի ժապավենով, որն առավել ընդգծեց նորընտիր հայ պատրիարք Մաթեոս Իզմիրլյանի (1894 թ. Վերջ – 1896 թ.) նկատմամբ անհարգալից վերաբերմունքը: Սասունի կոտորածներին հաջորդող ամիսներին Բ. Դուռը կրկնեց իր ցուցադրական պարգևատրումները հույներին: Հունական պատրիարքը Յըլիզզ պալատում 1895 թ. հուլիսի 19 (31)-ին պարգևատրվեց օսմանյան կլոր ոսկով՝ զարդարված ադամանդներով, որն աննախադեալ քայլ էր օսմանյան պատմության մեջ: Պարգևատրվեցին նաև Սրբազն Սինոդի այլ հոգևորականներ, որոնք որոշ ազդեցություն ունեին կայսրության ուղղափառ տարրի վրա⁶: Հույների նկատմամբ նման առանձնահատուկ վերաբերմունքն իրականացվում էր այնպիսի շեշտադրվածությամբ, որ մեկ անգամ ևս ապացուցում էր այն պարզ ճշմարտությունը, որ կոտորածները ոչ միայն մահմեդական ավազակախմբերի հակազդեցությունն էին հայերին, այլև մայրաքաղաքից եկած հրամանների հետևանք:

Կոստանդնուպոլսում Հունաստանի դեսպան Նիկոլաս Մավրոկորդատոսը 1895 թ. սեպտեմբերի 20-ին գրում է. «Անշուշտ քաղաքի (Կ. Պոլսի – Գ. Վ.) տարբեր մասերից մեծ քանակությամբ վկայություններ էինք ստանում, որոնք վերաբերում էին մեր հանդեպ Օսմանյան կառավարության ունեցած առանձնահատուկ դիրքին:

¹ Կիրակոսյան Զ., Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը (XIX դարի 70-ական թթ.), Երևան: Հայաստան հրատ., 1978, էջ 295:

² Svoronos N., Աշվ. աշխ., էջ 80: Թեսալիայի խնդրի և ընդհանրապես Բերլինի կոնգրեսում «Հունական հարց» վերաբերյալ մանրամասն տես Kofos Evangelos, Greece and the Eastern Crisis 1875-1878, (With a Foreword by W. N. Medlicott), Thessaloniki: Institute for Balkan Studies, 1975, pp. 154-225.

³ Rummel R., Statistics of Democide: Genocide and Mass Murder since 1900, Münster: Lit, 1998, p. 24.

⁴ Ասրի զոհերի թիվը 1895-1896 թթ. կազմում է 55.000: Stéu Naayem J., Shall This Nation Die, New York: Chaldean Rescue, 1921, p. 274.

⁵ Hassiotis I., The Greeks and the Armenian Massacres (1890-1896), Neo-hellenika 4, Austin, Texas, 1981, p. 84.

⁶ Նոյն տեղում, էջ 80:

Թուրքերը հայտնում էին մեր ժողովրդին, որ իրենք հույներին համարում են բարեկան անկախ նրանից, թե ում հպատակներն են նրանք՝ Հունական թագավորությա՞ն, թե՞ սուլթանի: Այդ օրերին հույների տներում աշխատող հայերին բռնում էին, բայց միշտ էլ ներողություն էին խնդրում տանտերերից»¹:

Դիտարկելով իրադարձությունների ընթացքը՝ հանգում ենք այն եզրակացության, որ 1894-1896 թթ. հայերի կոտորածների ժամանակ Արդուլ Շամիդն ուղղափառ հույների նկատմամբ վարում էր սիրաշահելու քաղաքականություն, որի հետապնդած նպատակները հետևյալներն էին.

ա) միջազգային բարդ իրադրությունից ելնելով՝ խուսափել Հունաստանի հետ առճակատումից, թ) սեպ խոել հույն և հայ քրիստոնյաների հարաբերությունների մեջ և թշնամանք սերմանել նրանց միջև, զ) հասնել հույների չեզոքությանը Շայկական հարցում՝ ամեն գնով թույլ չտալով նրանց միջամտել, դ) ցույց տալ, որ բարեփոխումների պահանջը տեղին չէ, քանի որ չի վերաբերում բոլոր քրիստոնյաներին:

Սակայն անգամ ննան քաղաքականությունը լուրջ բացթողումներ ունեցավ, քանի որ առանձին վայրերում թեև շատ փոքրաթիվ, այնուամենայնիվ հույներ կոտորվեցին: Այսպես, 1894 թ. ամռանից մինչև հաջորդ տարվա վերջը Կ. Պոլսում, Տրավիզոնում, Արգիրոպոլիսում (Գյումուշխանե), Նեոկեսարիայում (Նիքսար), Երզնկայում և Դիարբեքրում հույների զոհերի թիվը «կես դյուժինից չեր անցնում»²: Կոնխայում ռուսական հյուպատոսի՝ Կ. Պոլսի դեսպանության ուղղած 1896 թ. նարտի գեկույցի համաձայն՝ Կեսարիայում 1895 թ. նոյեմբերի 18-ին բազմաթիվ հայերի հետ կոտորվել են առաջ 10 հույն³:

Բացի այդ ճամապարհներին կողոպտել ու հափշտակել են ոչ միայն հայերին, այլ նաև հույներին: Իսկ 1895 թ. նոյեմբերին Երզրումում բնակվող շատ հույներ Ռուսաստան մեկնեցին այն հայկական զանգվածների հետ, որոնք «քշվել էին անխնա հետապնդունով»⁴: Հույներն անհրաժեշտության դեպքում նաև զինված հակահարված են հասցել մահմեդական խուժանին: Բնութագրական օրինակ է 1895 թ. սեպտեմբերին պոնտական Լեվիդիա գյուղի կամ այդ նույն ժամանակ Կերասուն քաղաքի հույների հերոսական դիմադրությունը⁵:

Այնուամենայնիվ, երկար ժամանակ չպահանջվեց, որպեսզի բացահայտվի Արդուլ Շամիդի «հունամետ» քաղաքականության կեղծիքը: Դա ակնհայտ դարձավ 1896 թ. Կրետեում բռնկված հերթական ապսատմբության ժամանակ, որը հանգեցրեց հույն-թուրքական «Երեսնօրյա պատերազմի» (1897 թ. ապրիլի 17 - մայիսի 20):

Այսպիսով, Օսմանյան կայսրությունում 19-րդ դարում ծավալված բարենորոգչական շարժումը զգալի արձագանքներ ունեցավ պետության ինչպես մյուս, այնպես էլ հույն հպատակների շրջանում: Թանգիմաթի շրջանում մի շարք անվանի հույներ

¹ Hassiotis I., նշվ. աշխ., էջ 81:

² Նույն տեղում, էջ 82:

³ Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում, Փաստաթղթերի և նյութերի ժողովածու Մ. Գ. Ներսիսյանի խմբագրությամբ, Երևան: Հայաստան, 1991, էջ 152-153:

⁴ Hassiotis I., նշվ. աշխ., էջ 78:

⁵ Նույն տեղում, էջ 79:

սկսեցին գրադարձնել բարձր պաշտոններ, սակայն դրանք ավելի շուտ բացառություններ էին, քան թե օրինաչափություն: Ժամանակի ընթացքում ակնհայտ դարձավ, որ ինչպես քրիստոնյա մյուս հպատակների, այնպես էլ հոյների նկատմամբ Օսմանյան կայսրությունում տարվող ազգային քաղաքականությունը նպատակ ուներ կանխել. իսկ անհրաժեշտության դեպքում ամեն գնով ճնշել նրանց ազատագրական շարժումները:

Գևորգ Վարդանյան, Հոյն բնակչությունն Օսմանյան կայսրությունում Թանգիմաթի շրջանում և դրանից հետո – Ակսած 1839 թ. օսմանյան կառավարությունը սկսեց Թանգիմաթի բարենորոգումները: 1856 թ. Հաթթը հումայունը պարունակում էր բոլոր օսմանահպատակների հավասարության խոստումներ՝ անկախ ազգային և կրոնական պատկանելությունից: Այնուամենայնիվ, 19-րդ դարում սկսված բարեփոխումները այդպես էլ չուժեցին մուտքանմերի և քրիստոնյաների հավասարության խնդիրը: 19-րդ դարի երկրորդ կեսին հոյն ժողովուրդը շարունակեց ազգային-ազատագրական պայքարը գլխավորապես Կրետեում. առանձին հուգումներ եղան նաև Թեսալիայում, Էպիրոսում և այլ շրջաններում:

**Геворг Варданян, Греческое население в Османской империи во время и после Танзимата – 1839 .
1856 -**

19 ,
19-

:

Gevorg Vardanyan, Greek population in the Ottoman Empire during and after the Tanzimat period – Beginning in 1839, the Ottoman government implemented the Tanzimat reforms. In 1856, the Hatt-ı Hümayun promised equality for all Ottoman subjects irrespective of their ethnicity and confession. However, the reforms launched in the 19th century did not solve the question of equality of the Muslims and the Christian minorities of the Empire. In the second half of the 19th century the Greek people continued the national struggle predominantly in Crete: separate demonstrations were held in Thessaly, Epirus and other regions.

Գևորգ Վարդանյան – պատմ. գիտ. թեկնածու, ՀՀ ԳԱԱ Յայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի համեմատական ցեղասպանագիտության բաժնի վարիչ

